



<i>Համարը</i> N 1100-Ն <i>Տիպը</i> Որոշում <i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀՊՏ 2008.10.15/62(652) Հոդ. 1058 <i>Ընդունող մարմինը</i> ՀՀ կառավարություն <i>Ստորագրող մարմինը</i> ՀՀ վարչապետ <i>Վավերացնող մարմինը</i> <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 16.10.2008	<i>Տեսակը</i> Ինկորպորացիա <i>Կարգավիճակը</i> Գործում է <i>Ընդունման վայրը</i> Երևան <i>Ընդունման ամսաթիվը</i> 25.09.2008 <i>Ստորագրման ամսաթիվը</i> 06.10.2008 <i>Վավերացման ամսաթիվը</i> <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>
---	---

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՀՆԱՈՃ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2008 թվականի N 1100-Ն

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՀՆԱՈՃ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1566-Ն որոշմամբ հաստատված ցանկի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել հափշտակված հնաոճ առարկաների և մշակութային արժեքների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2008 թ. հոկտեմբերի 6
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
սեպտեմբերի 25-ի N 1100-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՀՆԱՈՃ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են հափշտակված հնաժողովարկները և մշակութային արժեքները հաշվառելու, հաշվառումից հանելու հիմքերը և կարգը:

2. Սույն կարգում օգտագործված են հետևյալ հասկացությունները՝

1) **հնաժողովարկներ**՝ 75 տարվանից ավելի վաղեմություն ունեցող՝ մշակութային նշանակության առարկաներ և 50 տարվանից ավելի վաղեմություն ունեցող ստեղծագործություններ:

2) **հափշտակված հնաժողովարկ կամ մշակութային արժեքի տեղեկատվական-որոնողական քարտ** (այսուհետ՝ քարտ) (N 1 ձև)՝ հաշվառման փաստաթուղթ (հափշտակված հնաժողովարկների կամ մշակութային արժեքների վերաբերյալ), որը լրացնում է քրեական վարույթն իրականացնող մարմինը և ուղարկում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն (այսուհետ՝ ինֆորմացիոն կենտրոն)՝ հաշվառման վերցնելու համար:

3) **հափշտակված հնաժողովարկի և մշակութային արժեքի տեղեկատվական-որոնողական քարտի դասակարգիչ** (այսուհետ՝ դասակարգիչ) (N 2 ձև)՝ պայմանական ծածկագրերի ամբողջություն, որոնք անհրաժեշտ են քարտը լրացնելու և քարտում նշված տվյալները քարտադարան մուտքագրելու համար:

4) **հաշվառում**՝ հափշտակված հնաժողովարկների կամ մշակութային արժեքներին վերաբերող՝ լրացված հաշվառման փաստաթղթի ընդունմանը, դրանում նշված տեղեկությունների մշակմանը, համակարգմանն ու պահպանմանն ուղղված գործողություններ:

5) **հափշտակված հնաժողովարկների և մշակութային արժեքների քարտադարան** (այսուհետ՝ քարտադարան)՝ ինֆորմացիոն կենտրոնում գործող թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով վարվող պահոց, որտեղ հավաքվում, մշակվում, համակարգվում ու պահվում է հափշտակված հնաժողովարկների և մշակութային արժեքների մասին տեղեկատվությունը:

(2-րդ կետը խմբ. 19.06.14 N 628-Ն)

3. Հնաժողովարկ կամ մշակութային արժեքը հաշվառման վերցնելու համար հիմք է հանդիսանում դրանց հափշտակված լինելը, որի դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում լրացնում է N 1 ձևի քարտը՝ դասակարգչի համաձայն, և ուղարկում ինֆորմացիոն կենտրոն՝ հափշտակված հնաժողովարկ կամ մշակութային արժեքը հաշվառման վերցնելու համար:

(3-րդ կետը խմբ. 19.06.14 N 628-Ն)

4. (կետն ուժը կորցրել է 19.06.14 N 628-Ն)

5. Քարտում նշվում են քրեական գործի համարը, քրեական գործի հարուցման օրը, ամիսը, տարեթիվը, քրեական վարույթն իրականացնող մարմնի անվանումը, հնաժողովարկ կամ մշակութային արժեքի տեսակը, անվանումը (վերնագիրը), ստեղծողը, ստեղծման ժամանակը, ստեղծման վայրը, չափսերը, քաշը, գնահատման արժեքը, ձեռքբերման աղբյուրը, բովանդակությունը, ռճը (ուղղությունը), կատարման տեխնիկան, երանգավորումը, նյութը, մակագրությունը (ստորագրություն, արձանագրություն, դրոշմ, նշան), համառոտ նկարագրությունը (ձև, ձևավորում, բնորոշ մանրամասներ, հատուկ նշաններ, արատներ, վնասվածքներ), հափշտակության ամսաթիվը, վայրը, նկարագրությունը, պատկանելությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ իրավաբանական անձանց անվանումը, կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ իրավաբանական անձանց գտնվելու վայրը, ֆիզիկական անձի բնակության վայրը: Առկայության դեպքում քարտին կցվում է նաև հափշտակված հնաժողովարկ կամ մշակութային արժեքի լուսանկարը կամ էսքիզային նկարը:

(5-րդ կետը փոփ., լրաց. 19.06.14 N 628-Ն)

6. Ինֆորմացիոն կենտրոնը քարտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն մուտքագրում է քարտադարան:

(6-րդ կետը խմբ. 19.06.14 N 628-Ն)

7. (կետն ուժը կորցրել է 19.06.14 N 628-Ն)

8. Հափշտակված հնաժողովարկներ կամ մշակութային արժեքները հաշվառումից հանելու հիմք է հանդիսանում հնաժողովարկ կամ մշակութային արժեքի հայտնաբերումը:

(8-րդ կետը խմբ. 19.06.14 N 628-Ն)

9. Քրեական վարույթն իրականացնող մարմինը սույն կարգի 8-րդ կետում նշված դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրություն է ուղարկում ինֆորմացիոն կենտրոն՝ հնաժողովարկ կամ մշակութային արժեքը հաշվառումից հանելու համար՝ նշելով հաշվառումից հանելու հիմքը և ամսաթիվը:

(9-րդ կետը խմբ. 19.06.14 N 628-Ն)

10. Քրեական վարույթն իրականացնող մարմնից ստացած գրության հիման վրա ինֆորմացիոն կենտրոնը հափշտակված հնաժողովարկ կամ մշակութային արժեքը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանում է հաշվառումից:

(10-րդ կետը խմբ. 19.06.14 N 628-Ն)

11. Հաշվառումից հանված քարտերը հանվում են քարտադարանից և արխիվացվում են արխիվային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(11-րդ կետը խմբ. 19.06.14 N 628-Ն)

12. Քարտադարանից տեղեկություններ անմիջականորեն ստանալու իրավունք ունեն` Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ` Հայաստանի Հանրապետության ոստիկանություն) ստորաբաժանումները, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության դատախազությունը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության դատարանները: Պետական մյուս մարմինները քարտադարանից կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների միջոցով` օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում: Ֆիզիկական և իրավաբանական անձինք քարտադարանից կարող են ստանալ իրենց պատկանող հնաժողովարկաների և մշակութային արժեքների վերաբերյալ առկա տեղեկատվություն` Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների միջոցով: Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումները տեղեկատվությունը տրամադրում են պետական մարմինների, իրավաբանական անձանց գրությունները կամ ֆիզիկական անձանց դիմումներն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

(12-րդ կետը լրաց. 19.06.14 N 628-Ն, 08.07.15 N 747-Ն)

13. Քարտադարանից տեղեկություններ ստանալու համար հարցումները և դրանց պատասխանները ձևակերպվում են գրությամբ: Քարտադարանից անմիջականորեն տեղեկություններ ստանալու իրավունք ունեցող պետական մարմինների և Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների հարցումներին ինֆորմացիոն կենտրոնը պատասխանում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

(13-րդ կետը լրաց. 19.06.14 N 628-Ն)

14. Հարցումն էլեկտրոնային եղանակով կատարելու դեպքում քարտադարանի ավտոմատացված համակարգը տրամադրվող տեղեկությունը հավաստում է` նշելով տեղեկության տրամադրման ամսաթիվը և ժամը: Հարցման և տրամադրվող տեղեկության մասին տվյալներն էլեկտրոնային եղանակով արձանագրվում և պահվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Քարտադարանի ավտոմատացված համակարգից էլեկտրոնային եղանակով տեղեկությունների տրամադրման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

(14-րդ կետը լրաց. 19.06.14 N 628-Ն)

15. Հափշտակված հնաժողովարկաների և մշակութային արժեքների վերաբերյալ քարտադարանում առկա` սույն կարգի N 1 ձևի քարտի 4-20-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը, ինչպես նաև լուսանկարը կամ էքսիզային նկարը ենթակա են հրապարակման Հայաստանի Հանրապետության ոստիկանության պաշտոնական կայքում:

(15-րդ կետը լրաց. 19.06.14 N 628-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան

26 N 1

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՀՆԱՈՃ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-
ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՔԱՐՏԸ

1. Քրեական գործի համարը _____	2. Հարցման ամսաթիվը _____
3. Քրեական վարույթն իրականացնող մարմնի անվանումը _____	

4. Հնաոճ առարկայի տեսակը		5. Մշակութային արժեքի տեսակը		6. Անվանումը	
7. Ստեղծողը		8. Ստեղծման ժամանակը (դարը, տարին)			
9. Ստեղծման վայրը		10. Չափսերը (ծավալը)			
11. Քաշը					
12. Գնահատման արժեքը		13. Ձեռքբերման աղբյուրը			
14. Բովանդակ-կուրյունը		15. Ոճը		16. Կատարման տեխնիկան	
17. Երանգավորումը					
18. Նյութը		19. Մակագրությունը			
20. Հնաոճ առարկայի կամ մշակութային արժեքի համառոտ նկարագրությունը (ձևը, ձևավորումը, բնորոշ մանրամասները, հատուկ նշանները, արատները, վնասվածքները)					
21. Հափշտակության կատարման ամսաթիվը					
22. Հափշտակության կատարման վայրը					

Քարտի դարձերեսը

23. Պատկանելությունը	
24. Պետական մարմնի անվանումը	
25. Տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը	
26. Իրավաբանական անձի անվանումը	
27. Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը	
28. Ծննդյան տարեթիվը	
29. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի բնակության վայրը	
(հանրապետություն)	
(քաղաք, մարզը, գյուղը) (փողոցը, շենքը, բնակարանը)	

Էսքիզ կամ լուսանկար

Քարտի լրացման ամսաթիվը

Քարտը լրացրեց
(պաշտոնը, կոչումը)

Պետ
(կոչումը, ազգանունը, ստորագրությունը)

(ազգանունը, ստորագրությունը)

Հեռախոսահամարը

**ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՀՆԱՈՃ ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-
ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՔԱՐՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ**

NN ը/կ	Ծածկագիրը	Քարտի բաղադրիչների անվանումները
1	2	3
1.	թիվ	քրեական գործի համարը
2.	օրը, ամիսը, տարեթիվը	հարուցման ամսաթիվը
3.	տեքստ	քրեական վարույթն իրականացնող մարմնի անվանումը
4.		հնառճ առարկայի տեսակը
	01	մշակութային նշանակության առարկաներ
	02	համարանիշային (սերիական) արտադրության առարկաներ
	03	գանգվածային արտադրության առարկաներ
	04	զրական և երաժշտական ստեղծագործությունների բնօրինակներ
	05	գեղանկարներ
	06	պաշտամունքային առարկաներ
	07	փորագրություններ և այլ դրոշմվածքաձևեր
	08	կենցաղային իրեր (տեխնիկական սարքեր)
	09	մեղալներ, կրծքանշաններ, շքանշաններ
	10	կնիքներ
	11	բուսական առարկաներ, նմուշներ, հավաքածուներ
	12	սպասք
	13	կահույք (ֆուրնիտուրա)
	14	զարդատուփ (արկղիկ)
	15	պատի զարդարանքներ
	16	աշխատանքային գործիքներ
	17	առանձին կամ հավաքածու գրքեր
	18	երաժշտական գործիքներ
	19	ժամացույց
	20	զենք
	21	արխիվային փաստավավերագրեր
	22	մետաղադրամներ
	23	թղթադրամներ
	24	առանձին կամ հավաքածու նամականիշեր, դրոշմանիշեր
	25	գորգ (կարպետ)
	26	սառը զենք
	27	գորելեն
	28	քանդակներ
	29	ոսկերչական իրեր, զարդեր
	30	կենդանական առարկաներ, նմուշներ, հավաքածուներ
	31	երկրաբանական առարկաներ, նմուշներ, հավաքածուներ
	32	հրատարակություններ
	33	սրբապատկեր
	34	գծանկար (գրաֆիկա)
	35	մանրանկար
	36	խճանկար
	37	այլ առարկաներ
5.		մշակութային արժեքի տեսակը
	01	պատմական առարկաներ, ընտանեկան մասունքներ
	02	պատմահնագիտական գտածոներ և առարկաներ
	03	գեղարվեստական հորինվածքներ և համակցված կառուցվածքներ (մոնտաժներ)

	04	պաշտամունքային առարկաներ
	05	փորագրություններ և այլ դրոշմվածքաձևեր
	06	կենցաղային իրեր (տեխնիկական սարքեր)
	07	գեղարվեստական մեդալներ, կրծքանշաններ, շքանշաններ
	08	կնիքներ
	09	բուսական առարկաներ, նմուշներ, հավաքածուներ
	10	սպասք
	11	կահույք (ֆուրնիտուրա)
	12	հնագույն զարդատուփ (արկղիկ)
	13	պատի զարդարանքներ
	14	հնագույն աշխատանքային գործիքներ
	15	առանձին կամ հավաքածու հնագույն և հազվագյուտ գրքեր
	16	եզակի երաժշտական գործիքներ
	17	պատմական հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ
	18	տարազ
	19	գեղարվեստական հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ
	20	ժամացույց
	21	ճարտարապետական և կոթողային հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ
	22	զենք
	23	գեղանկար
	24	փաստաթղթային հուշարձաններ, արխիվային փաստավավերագրեր
	25	փաստաթղթային հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ
	26	մետաղադրամներ
	27	թղթադրամներ
	28	առանձին կամ հավաքածու նամականիշեր, դրոշմանիշեր
	29	գորգ (կարպետ)
	30	սառը զենք
	31	գորելեն
	32	հազվագյուտ ձեռագրեր
	33	ժողովրդական ստեղծագործության առարկաներ
	34	քանդակներ
	35	եզակի ոսկերչական իրեր, զարդեր
	36	կենդանական առարկաներ, նմուշներ, հավաքածուներ
	37	երկրաբանական առարկաներ, նմուշներ, հավաքածուներ
	38	ազգագրական նյութեր
	39	մարդաբանական նյութեր
	40	բանահյուսական նյութերի անսխյա ժողովածուներ
	41	հնատիպ հրատարակություններ
	42	սրբապատկեր
	43	գծանկար (գրաֆիկա)
	44	մանրանկար
	45	խճանկար
	46	այլ առարկաներ
6.	տեքստ	հնաոճ առարկայի կամ մշակութային արժեքի անվանումը (վերնագիրը)
7.	տեքստ	ստեղծողը
8.	դար, տարի	ստեղծման ժամանակը
9.	տեքստ	ստեղծման վայրը
10.	երկար., լայն., բարձր. (սմ) տրամագիծ (սմ)	չափսերը (ծավալը)

11.	կարատ, գ, կգ	քաշը
12.	դրամ	գնահատման արժեքը
13.		ձեռքբերման աղբյուրը
	01	ժառանգություն
	02	նվիրատվություն
	03	աճուրդ
	04	մշակութային արժեքների խանութ
	05	մասնավոր անձ
	06	արտերկիր
14.		բովանդակությունը
	01	բնանկար
	02	դիմանկար
	03	մարտանկար
	04	ծովանկար
	05	ծաղրանկար
	06	նատյուրմորտ
	07	զարդանկար
	08	պատմական պուժե
	09	դիցաբանական պուժե
	10	կրոնական պուժե
	11	կենդանիների պատկերում
	12	որսի տեսարան
	13	ճարտարապետական հորինվածք
	14	մանկան կիսանդրի
	15	կնոջ կիսանդրի
	16	տղամարդու կիսանդրի
	17	զարդաքանդակ
	18	մանկան արձանիկ
	19	կնոջ արձանիկ
	20	տղամարդու արձանիկ
	21	մանկան արձան
	22	կնոջ արձան
	23	տղամարդու արձան
	24	բազմաֆիգուր հորինվածք
	25	այլ
15.		ռճ (ուղղություն)
	01	աբստրակցիոնիզմ
	02	ավանգարդիզմ
	03	անտիկ
	04	բարոկկո
	05	վերածնունդ
	06	գոթական
	07	եգիպտական
	08	կլասիցիզմ
	09	օրիենտալիզմ (արևելյան ռճ)
	10	ռեսպիզմ
	11	ռոմանտիզմ
	12	ազգային
	13	սյուրռեալիզմ
	14	ռոկոկո
	15	այլ

16.		կատարման տեխնիկան
	01	ջրաներկի
	02	ճենապակի՝ կրկնաթրծված
	03	ասեղնագործման
	04	ջնարակի
	05	փորագրման
	06	փշման
	07	դրվագագարդման
	08	մատիտանկարման
	09	կոփման
	10	փայտափորագրման
	11	ծեփման
	12	լինոփորագրման
	13	վիմատպման
	14	ձուլման
	15	յուղաներկման
	16	օֆորտի
	17	գունամատիտանկարման
	18	պոլիգրաֆիական տպագրման
	19	նախշագարդման
	20	նախշագարդման՝ ջնարակի վրայից
	21	նախշագարդման՝ ջնարակի տակից
	22	ցանցագարդման
	23	լաքապատման
	24	երեսակման
	25	ռսկեջրման
	26	փայլեցման
	27	արծաթապատման
	28	սևաներկման
	29	արծնապատման
	30	տեմպերայի
	31	տուշ՝ ստվերաներկման
	32	ածուխի
	33	մետաղյա թելագարդման
	34	քանդակադրոշմման
	35	դրոշմահատման
	36	այլ
17.		երանգավորումը
	01	մոայլ, մուգ երանգի
	02	մեղմ, գունամատիտի երանգի
	03	բազմագույն
	04	խամրած, փայլատ
	05	ջերմ երանգի
	06	սառը երանգի
	07	միագույն
	08	սև ու սպիտակ
	09	այլ երանգի
18.		նյութը
	01	երկաթ
	02	բրոնզ
	03	թուղթ

	04	գիպս
	05	փայտանյութ (օրինակ՝ լորենի, թխկի, ընկուզենի)
	06	արժեքավոր տեսակի փայտանյութ (օրինակ՝ կարմիր, սև, վարդագույն)
	07	թանկարժեք քար (օրինակ՝ ալմաստ, զմրուխտ, սուտակ)
	08	ոսկի
	09	ստվարաթուղթ
	10	կավ
	11	կաշի
	12	ոսկոր
	13	արույր
	14	ջնարակախեցի
	15	սպիտակ մետաղ (ոչ ազնիվ)
	16	պղինձ
	17	մոլորի
	18	քար (օրինակ՝ մարմար)
	19	կիսաթանկարժեք քար (օրինակ՝ նեֆրիտ, հասպիս)
	20	արծաթ
	21	ապակի
	22	թրծակավ
	23	գործվածք
	24	ճենապակի
	25	հախճապակի
	26	բյուրեղապակի
	27	արծնապակի
	28	այլ նյութ
19.	տեքստ	մակագրություն (ստորագրություն, արձանագրություն, դրոշմ, նշան)
20.	տեքստ	հնաոճ առարկայի կամ մշակութային արժեքի համառոտ նկարագրությունը (ձև, ձևավորում, բնորոշ մանրամասներ, հատուկ նշաններ, արատներ)
21.	օրը, ամիսը, տարեթիվը	հափշտակության կատարման ամսաթիվը
22.	տեքստ	հափշտակության կատարման վայրը
23.		պատկանելությունը
	01	թանգարան
	02	եկեղեցի
	03	կաթոլիկ եկեղեցի
	04	սինագոգա
	05	մզկիթ
	06	աղոթատուն
	07	պետական մարմին
	08	տեղական ինքնակառավարման մարմին
	09	ֆիզիկական անձ
	10	իրավաբանական անձ
	11	գրադարան
	12	պարզված չէ
	13	օտարերկրյա ներկայացուցչություն
	14	օտարերկրյա ֆիրմա
24.	տեքստ	պետական մարմնի անվանումը
25.	տեքստ	տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը
26.	տեքստ	իրավաբանական անձի անվանումը
27.	տեքստ	ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը
28.	օրը, ամիսը, տարեթիվը	ծննդյան տարեթիվը

29.	տեքստ	պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի բնակության վայրը
-----	-------	---

(ձևը խմբ. 19.06.14 N 628-Ն)

(հավելվածը խմբ., փոփ., լրաց. 19.06.14 N 628-Ն, լրաց. 08.07.15 N 747-Ն)